ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Լուսինէ Թումանեան

Վանայ լճի Կտուց կղզում է գտնւում Սբ. Կարապետ անապատը, որի հիմնադրումը եկեղեցական աւանդութիւնը կապում է Սբ. Գրիգոր Լուսաւորչի անուան հետ: Սակայն վանքի գործունէութեանը վերաբերող յստակ տուեալները պատկանում են ԺԵ. դարին: Մինչ այդ միայն մէկ վկայութիւն ունենք Կտուց անապատի եւ գործող գրչութեան կենտրոնի վերաբերեալ: Սա ձեռագրական մի փոքրիկ միաւոր է, ԺԱ. դարում գրուած Ճառընտիրի մի մագաղաթեայ թերթ՝ գրուած մանր երկաթագրով, իսկ ստորին լուսանցքում պարունակում է յիշատակութիւն Կտուցի մասին՝ գրուած գրչի ձեռքով. «Կտցոյս է»[1]: Այս պատառիկը այժմ պահւում է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան ձեռագրատանը: Անապատին վերաբերող մնացած տեղեկութիւնները պատկանում են ԺԵ. դարին: Հնագոյն ձեռագիրը, որի մասին տեղեկութիւն ունենք, մի Աւետարան է՝ գրուած 1414 թ. Յովսէփ քահանայի ձեռքով. «Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուին Հայոց ՊԿԳ (1414) ի դրան Սուրբ Խաչին եւ Սուրբ Կարապետին եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորչին... որ կոչի Կտուց: ...ի հայրապետութեան տեառն Հայոց կաթողիկոսի տէր Դաւթի՝ Սուրբ Խաչի Աղ[թ]ամարայ առաջնորդի, եւ առաջնորդութեան սուրբ ուխտին Սուրբ Կարապետին... արհիեպիսկոպոսին Մխ[իթ]արա...: Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ հարկապահանջութեամբ ազգս տապալի(՞)/// զի կարի ձանձրացեալ եմք յանաւրինաց բռնութենէ. ի քրթէ, ի թաթարէ եւ յայլ ամենայն///»[2]: Ձեռագիրը, ցաւօք, կորած է, սակայն նրա յիշատակարանը մեզ աւանդում է տեղեկութիւններ Կտուց մենաստանի մասին, այդ թւում՝ Սուրբ Ուխտի անունը՝ Սուրբ Կարապետ, առաջնորդը՝ Մխիթար արքեպիսկոպոս, Աղթամարի Դաւիթ Գ. կաթողիկոսը (1393-1433), նաեւ՝ յիշւում են վանքի եկեղեցիների կամ խորանների անունները՝ Սուրբ Խաչ, Սուրբ Կարապետ, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

Վկայութիւն ունենք, որ 1415 թ. Ծերուկ գրիչը Կտուց անապատում մի Ժողովածոյ է գրել. սակայն այն մեզ չի հասել[3]:

Կտուց անապատը որպէս գրչութեան վայր յիշատակող ԺԵ. դարի միւս ձեռագրերը պատկանում են երկրորդ դարակէսին: Դրանք ստեղծել են Խաչատուր, Յովհաննէս, Մինաս եւ Բարսեղ գրիչները, Մինաս եւ Կարապետ ծաղկողները:

Կտուց անապատի միաբաններից է Խաչատուր աբեղան: Նրանից մեզ յայտնի է 6 ձեռագիր: Վաղագոյնը գրուել է 1456 թ., վերջինը՝ 1482 թ.: Գրչի ձեռագրերի յիշատակարանները, թէեւ սակաւիկ, բայց մեզ հաղորդում են նրա մասին կենսագրական տուեալներ: Խաչատուր աբեղայի ծնողները Յովանէս ու Ասըլմելիքն են, եղբայրը՝ Եւատչէն եւս Կտուց անապատի միաբան է: Խաչատուրը նշում է, որ նա է իրենց հայրագլուխը «զհայրն իմ՝ զՅովանէս եւ զմայրն իմ՝ զԱսըլ-մելիքն, եւ զեղբայրքն իմ՝ զԵւատչէն, որ է հայրագլուխ մեր»: Նրա միւս եղբայրը Յովհաննէս քահանայ Արծկեցին է: Գրչի ուսուցիչը՝ Գրիգոր վարդապետ Թաբեկենցն է. նրան է պարտական Խաչատուրը գրչութեան արուեստին այդքան լաւ տիրապետելու համար: Նրա հարազատներից է նաեւ Ստեփաննոս քահանան, ով օգնում էր յատկապէս թուղթ կոկելով (1456 եւ 1481 թթ. ձեռագրերի համար): Գրիչը գրում է. «Եւ զՍտեփանոս քահանայն՝ հարազատ հոգոյ իմոյ, որ բազում աշխատեցաւ ի կոկել թղթիս: Եւ զԳրիգոր վարդապետն մեր զԹաբեկենցն, որ բազում հոգ տարաւ ի վերայ մեր եւ զսակաւ գիծս մեզ ուսոյց...»: Յատկանշական է նաեւ, որ Խաչատուրի գրչագրերը նկարազարդել է Մինաս ծաղկողը: Նրան Խաչատուրը նշել է իր՝ 1456 թ., 1462 թ. եւ 1482 թ. ձեռագրերում՝ համեմատելով Բերսէլիէլի՝ Հին Ուխտի տապանակի նկարողի հետ. «Եւ զարձեալ աղաչեմ յիշել յաղուիս ձեր զտէր Մինաս քաջ նկարաւղն, որ յար եւ նման է Բերսէլիէլի՝ հոգիընկալ առաջին նկարողին տապանակին, եւ է յաշակերտաց սուրբ վարդապետացն՝ Թումային եւ Մկրտիչ Աւլբեկենց վարդապետին...»:

Ինչպէս վերը նշեցինք, գրչի վաղագոյն ձեռագիրը 1456 թ. Աւետարանն է (Փարիզ, 18)[4], որի ծաղկողը՝ Մինասն է. այն գրուել է Յովհաննէս տանուտէրի պատուէրով: Որպէս գրչութեան վարպետ՝ Խաչատուրը կարեւորել է գաղափար օրինակի լաւ լինելը եւ ձեռքի տակ ունեցել միաժամանակ երկու գրչագիր. «Յերկու ճշմարիտ աւրինակաւ գրեցաւ սա՝ ի թուականիս Հայոց ՉԵ (1456), ի վանքս, որ կոչի Կտուց, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետիս, եւ Սուրբ Աստուածածնիս, եւ Սուրբ Խաչիս, եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորչիս, եւ Սրբոց Հռիփսիմեանցս, եւ այլ սրբոց, որ աստ կան հաւաքեալ, ձեռամբ մեղսաներկ եւ սառուցեալ Խաչատուրու, ի խնդրոյ Յոհանէս բարեմիտ տանուտէրին...»:

1462 թ. Խաչատուր աբեղան ընդօրինակում է Յայսմաւուրք (Մատենադարան (այսուհետեւ՝ ՄՄ), ձեռ. թիւ 4883) Ստեփաննոս եւ Խաչատուր աբեղաների խնդրանքով: Նա նշում է իր եղբօր՝ Յովհաննէս քահանայ Արծկեցու անունը, «զի նա եւս բազում աշխատեցաւ ի գիրքս», եւ ծաղկողին՝ Մինաս կրօնաւորին[5]: Ձեռագրի ընդարձակ յիշատակարանը պարունակում է իր ժամանակի պատմական կարեւոր տուեալներ: Նախ՝ պատմւում է 1462 թ. Կտուց անապատի վերանորոգութեան մասին՝ կազմակերպուած Կտուցի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի եւ միաբան Ստեփաննոս վարդապետի կողմից, նշւում են վանքի առաջնորդի ու կրօնաւորների անունները. «Աւարտեցաւ քրիստոսահիմն եւ քաջ նահատակաց եւ մարտիրոսաց հոգիաբուխ սուրբ տառս ի յամի ՉԺԱ (1462), ի վանքս որ կոչի Կտուց, ընդ հովանեաւ Սուրբ Խաչիս եւ սուրբ նշխարաց ճառագայթի ճրագ ճշմարտութեան Սուրբ Կարապետիս, որ յայսմ ամի նորոգեցաւ մոլայիւ, ձեռամբ Ստեփանոս վարդապետի, որ մականուն Ֆալաք, եւ Գրիգոր եպիսկոպոսի, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս եւ այլ միեղէն եղբարցս, որ չարչարեցան եւ աշխատեցան ի սուրբ եկեղեցիս՝ Խաչատուր գծողս, եւ Յակոբ կրօնաւորն, եւ Սարգիս կրօնաւորն, եւ Ստեփանոս կրօնաւորն, եւ Յովանէս կրօնաւորն, եւ Մկրտիչ

---

1 *Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ* (այսուհետ՝ Վենետիկ), հտ. Բ, կազմ.՝ Բ. Սարգիսեան. Գ. Սարգսեան, *Հաւաքումն բանից նախնեաց*, ԺԱ-ԺԲ, ձեռ. թիւ 749, հմր. 306, էջ 1175-1180:

2 *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, ԺԵ. դար, հտ. Ա, կազմ.՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1955, էջ 165-166. Համազասպ Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Ա մաս, Վիեննա, 1940, էջ 58:

3 Ղ. Փիրղալեմեան, *Նստարք Հայոց*, Կ. Պոլիս, էջ 47:

4 Ձեռագիրն այժմ գտնւում է Փարիզի Ազգային գրադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածոյում, տե՛ս **R. Kevorkian, A. Ter-Stepanian**, *Manuscrits arméniens de la Bibliothèque national de France*, Paris, 1998, 26-30, # 18:

5 Մինաս կրօնաւորը Վասպուրականում մեծ հոչակ վայելած մանրանկարիչներից մէկն է եղել, գործել է ինչպէս Կտուց անապատում, այնպէս էլ Վանում, Աղթամարում եւ Վասպուրականի այլ գրչութեան կենտրոններում:

կրօնաւորն, եւ Յովանէս կրօնաւորն, եւ Կարապետ կրօնաւորն, եւ Ներսէս կրօնաւորն, եւ Յոհանէս ճգնաւորն, եւ Կարապետ կրօնաւորն, եւ Աստուածատուր կրօնաւորն, եւ Կարապետ կրօնաւորն, եւ Մխիթար կրօնաւորն, եւ Խաչատուր կրօնաւորն եւ այլ ամենայն աշխատաւորք...»[6]: Գրիչը շարունակում է պատմել, որ ժամանակի Աղթամարի կաթողիկոսը՝ տէր Զաքարիան, տիրեց երկու աթոռների՝ Էջմիածնի եւ Աղթամարի, նաեւ Սբ. Էջմիածնից սբ. Գրիգոր Լուսաւորչի աջը տեղափոխեց Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին. «Եւ ամենայն ոք աւրհնէր զարարիչն Աստուած եւ զտէր Զաքարիա կաթողիկոսն, որ արժանացոյց տեսելեան սուրբ աջոյն Լուսաւորչին...»: Յայտնի է, որ 1441 թ. Հայոց կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխւում է Էջմիածին, եւ Ամենայն Հայոց նորընտիր կաթողիկոս Կիրակոս Վիրապեցին տեղափոխում է նաեւ սբ. Գրիգոր Լուսաւորչի աջը: Աղթամարի կաթողիկոս տէր Զաքարիան ստիպուած է լինում 1461 թ. վերադառնալ Աղթամար՝ իր հետ թաքուն կերպով բերելով նաեւ Սբ. Աջը: Բնականաբար, վասպուրականցիներն այս իրողութիւնը մեծ ոգեւորուածութեամբ են ընդունում, ինչն էլ արտայայտուած է ոչ միայն վերոնշեալ, այլ՝ Աղթամարում ընդօրինակուած այլ ձեռագրերի յիշատակարաններում[7]:

Խաչատուր գրչի ընդօրինակած միւս չորս մատեանները Աւետարաններ են: Սրանցից առաջինը գրուել է 1463 թ. (ՄՄ 6356), Հալիֆէ տանուտէրի խնդրանքով: Երկրորդ Աւետարանը գրուած է 1475 թ. (կորած), ստացողներն են «սրբասէր եւ բարեմիտ խօջայն Էդըլշէն եւ մայրն իւր Գաւնգուլլէն»[8]: Երրորդ՝ 1481 թ. գրուած Աւետարանի (կորած) ստացողն է Վարդան աբեղան. «Ի խնդրոյ սրբասէր եւ մաքրամիտ աբեղային Վարդանայ, որ զեկեղեցոյ գլուխն սուաղեաց եւ զարտն ի Շատուան երար ոխֆ եկեղեցոյն, թուականիս մերում ՋԼ (1481)...»[9]: Խաչատուր աբեղայից մեզ հասած վերջին Աւետարանը պատկանում է 1482 թուականին (Նոր Ջուղա, 497): Սրա ստացողն է խօջա Իդիլշին, ծաղկողը՝ Մինաս կրօնաւորը: Ինչպէս նախորդ ձեռագրում, այստեղ եւս Խաչատուրը յիշում է իր աշակերտին՝ Ստեփաննոսին. «ԶԽաչատուր գծող Սուրբ Աւետարանիս եւ զաշակերտն իմ զՍտեփաննոս յիշեցէք ի Քրիստոս»[10]: Խաչատուր աբեղայից մեզ հասած բոլոր վեց ձեռագրերում էլ նշուած է գրչութեան վայրը՝ Կտուց անապատը:

Կտուց անապատից մեզ յայտնի յաջորդ գրիչը՝ Յովհաննէս աբեղան է: Նրանից մեզ յայտնի է հինգ ձեռագիր: Սրանց բոլորի յիշատակարաններում էլ գրիչը նշում է իր ուսուցիչներին՝ Գրիգոր եւ Խաչատուր կրօնաւորներին: 1470 թ. եւ 1483 թ. ձեռագրերում յիշում է նաեւ իր ծնողներին՝ Մուրատին եւ Մարգարտին: Առաջին ձեռագիրը Աւետարան է՝ գրուած 1470 թ. (կորած)[11]: Յաջորդ ձեռագիրը 1472 թ. ընդօրինակուած Աւետարանն է (Նոր Ջուղա 476)[12], ծաղկողը՝ Աղթամարի վանքի միաբան եւ Մինաս ծաղկողի աշակերտ Կարապետն է. «Զկարապետ նկարողս յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած զձեզ»: Յիշատակում է նաեւ Նիգարին «որ զգրոց թերձան մանեց»:

Յովհաննէս գրչի յաջորդ ձեռագիրը Տօնականն է (Ճառընտիր, ՄՄ 4869)՝ գրուած 10 տարի յետոյ՝ 1482 թ.: Վանքի՝ Ստեփանոս կրօնաւորի կողմից վերանորոգուելու մասին արդէն գիտենք Խաչատուր գրչի 1462 թ. գրուած ձեռագրից: Յովհաննէս գրիչն իր այս ձեռագրում 20 տարի անց եւս յիշատակում է անապատի համար կարեւոր այս իրադարձութիւնը, նշում նաեւ իր կրօնաւոր եղբայրների անունները. «...տէր Գրիգոր եպիսկոպոսն, եւ զՍարգիս եպիսկոպոսն, եւ զԽաչատուր վարպետն իմ, եւ զՅակոբ կրօնաւորն, եւ զՀայրապետ եպիսկոպոսն, եւ զՆերսէս կրօնաւորն, եւ զփոքր Խաչատուր կրօնաւորն՝ զհայրապետ վանացս, եւ զՍտեփանոս բաբունապետն՝ զնորոգող սուրբ եկեղեցոյս սուրբ Կարապետի, եւ զՄինաս ծաղկող սուրբ գրոցս, որ զարդարեալ պայծառացոյց, եւ զԿարապետ եկեղեցպան կրօնաւորն, եւ զայլ միեղէն եղբարքն առհասարակ՝ զմեծ եւ զփոքրն՝ դասակից եւ մասնակից... Այլ եւ յիշեցէք զվարպետն իմ զԳրիգոր, որ զսակաւ գիրս ուսոյց մեզ»[13]:

Զորրորդ ձեռագիրը 1483 թ. գրուած Աւետարան է, որի ծաղկողը Մինասն է (ՄՄ 6879): Այստեղ գրիչը յիշատակում է մենաստանի եպիսկոպոսներին, կրօնաւորներին եւ միաբանակից միւս եղբայրներին. «զԳրիգոր եպիսկոպոսն, եւ զՍարգիս եպիսկոպոսն, եւ զմեծ զԽաչատուր կրօնաւորն՝ զվարպետն իմ, եւ զԳրիգոր վարպետն իմ, եւ զՅակոբ կրօնաւորն, եւ զՍտեփանոս կրօնաւորն, եւ զԽաչատուր խէրպետն, զՆերսէս կրօնաւորն, եւ զԿարապետ եկեղեցպանն, եւ զՄինաս ծաղկողն եւ զայլ քահանայս եւ զմիաբան ուխտիս՝ զմեծ եւ զփոքր առհասարակ...»: Դառնացած գրիչը թողել է պատմական իրողութիւնների մասին տուեալներ. «Եւ արդ, գրեցաւ սա ի դառն եւ ի նեղ ժամանակիս, զի վասն ծովացեալ մեղաց իմոց Երզընկա քաղաք տապալեցաւ, եւ ԺԸՌ (18000) ոգի ի ներքեւ հողու մնաց, եւ այլ ոչ մնաց մի կենդանի: Եւ տաճկունք քանդեցին զսքանչելագործն: Բայց յայս ուրախ եմք, զի կրակ անգաւ յերկնից եւ էրեց զքաբայն՝ ԺԲ (12) մընիրայ ի հետ եւ վեց հազար ոգի»: Ինչպէս նախորդ, այնպէս էլ այս ձեռագրում գրիչը բաւականին մանրակրկիտ նշում է գրչութեան վայրը, ժամանակը եւ այլ իրադարձութիւններ. «Յաստուածաբնակ Սուրբ Ուխտս, որ կոչի Կտուց, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, եւ Սուրբ Խաչիս, եւ Սուրբ Կարապետիս, եւ Սուրբ Ստեփանոսիս, եւ այլ ամենայն սրբոցս, որ աստ կան հաւաքեալ, ձեռամբ մեղսաներկ Յոհանիսի...»[14]:

Յովհաննէս գրչից մեզ հասած հինգերորդ ձեռագիրը Մաշտոց է (ՄՄ 4087): Ստացողը Ասպահանչին է: Յիշատակարանի եղծուած լինելու պատճառով անյայտ է մնացել գրչութեան թուականը: Փորձենք ճշտել այն: Շատ կարեւոր է, որ այս ձեռագիրը մեզ յուշում է Աղթամարի կաթողի-

---

6 Մաշտոցի անուան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. թիւ 4883 (թերթ՝ 615, թուղթ, 32x21, երկսիւն, բոլորգիր): *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, ԺԵ դար, հտ. Բ, կազմ.՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1958, էջ 180-184:

7 Տարիներ անց՝ 1477 թ., Սբ. Աջը կրկին վերադարձուում է Էջմիածին, սակայն նորից թաքուն կերպով: Պատմական այս իրողութեան մասին աւելի մանրակրկիտ տե՛ս Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում*, հտ. Բ, Սբ. Էջմիածին, 2001, յօդ. 1494-1497, 1511:

8 *Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի*, կազմ.՝ Ե. Լալայեան, Թիֆլիս, 1915 (այսուհետև՝ ԼՑՎ), ձեռ. թիւ 197, էջ 469-476. *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, ԺԵ դար, հտ. Բ, էջ 382-383 (այն ձեռագրերը, որոնց ներկայի գտնուելու վայրը չենք նշում, անյայտ են մնացել):

9 ԼՑՎ, ձեռ. թիւ 200, էջ 485-492. *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, ԺԵ դար, հտ. Գ, կազմ.՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1967, էջ 12-13. Հ. Ոսկեան, Ճշ. աշխ., Ա մաս, էջ 61:

10 *Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, կազմ.՝ Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970 (այսուհետև՝ Նոր Ջուղա), ձեռ. թիւ 479, էջ 106-107, հմր. 71: *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, ԺԵ դար, հտ. Գ, էջ 30:

11 Ձեռագիրը չի պահպանուել, յիշատակարանը տե՛ս ՄՄ ձեռ. թիւ 4515 (Ղեւոնդ Փիրղալեմեան, *Նշխարք պատմութեան հայոց*, գրուած 1884 թ. Վանում). *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, ԺԵ դար, հտ. Բ, էջ 300-301:

12 Նոր Ջուղա, ձեռ. թիւ 476, էջ 94-96, հմր. 62 (թերթ՝ 379, թուղթ, 17.6x13, երկսիւն, բոլորգիր: Մանրանկար. տէրունական՝ 21, աւետարանիչք՝ 4, խորան՝ 10, կիսախորան՝ 4, լուսանցազարդեր եւ զարդագրեր):

13 *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, ԺԵ դար, հտ. Գ, էջ 29-30:

14 *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, ԺԵ դար, հտ. Գ, էջ 39-40:

կոսի՝ տէր Ստեփաննոսի եւ Կտուցի վանքի առաջնորդի՝ Խաչատուր հայրապետի անունները: Յայտնի է, որ Ստեփաննոս Գ. Տղան Աղթամարում կաթողիկոս է եղել 1465-1489 թթ.: Սակայն 1483 թ., ինչպէս յայտնի է Յովհաննէս գրչի այս թուականին ընդօրինակուած գրչագրից, Կտուցի առաջնորդը դեռեւս Գրիգոր եպիսկոպոսն էր. Խաչատուր հայրապետը յաջորդել է նրան: Ուստի այս ձեռագիրը պէտք է գրուած լինի 1483-1489 թթ. Միջակայքում:

Կտուց անապատից մեզ յայտնի յաջորդ գրիչը Մինաս կրօնաւորն է: 1484 թ. Մինաս կրօնաւորը Ազբեկի եւ նրա կնոջ՝ Հաթունմելեքի խնդրանքով ընդօրինակում է Մաշտոց ծիսամատեան (ՄՄ 4966): Մէկ Մաշտոց էլ մեզ հասել է Բարսեղ կրօնաւորից[15]: Ձեռագիրը յետագայում պահուել է Վան քաղաքում, իսկ այժմ կորած է:

ԺԶ. դ. երկիրը տուժում է Օսմանեան Թուրքիայի եւ Սեֆեան Իրանի միջեւ սկսուած պատերազմի հետեւանքով: Այս դարում, կարելի է ասել, որ թէ՛ Լիմ, թէ՛ Կտուց անապատները եւ առհասարակ վանական կեանքը, դրա հետ կապուած նաեւ՝ գիտականն եւ մշակութայինը, անկում են ապրում: ԺԶ. դ. Կտուցում գրուած որեւէ ձեռագիր մեզ յայտնի չէ:

ԺԷ. դ. գրուած վաղագոյն ձեռագիրը 1604 թ. Աւետարանն է՝ ընդօրինակուած Կարապետ եւ Սահակ գրիչների կողմից խօջա Սպանդիարի պատուէրով (ՄՄ 4838): 1621 թ. Պօղոսը Կտուցում ընդօրինակում է Ներսէս Մեծի Պատմութիւնը (կորած, Մուշ 70)[16]:

Մենաստանում վանական կեանքը, դրա հետ կապուած նաեւ՝ գիտական եւ մշակութային գործունէութիւնը աշխուժանում են ԺԷ. դարի 20-ական թուականներից յետոյ, երբ Ներսէս վարդապետ Մոկացու վանքերի բարեկարգումի շարժումը Լիմից Կտուց անապատ է հասնում՝ նրա յաջորդի՝ Ստեփաննոս Շատախեցու օրօք: Լիմ անապատի միաբանները շատանում են, եւ նրանց մի մասը տեղափոխւում են Կտուց՝ միանալով Կտուցի սակաւաթիւ ճգնաւորներին:

1646 թ. Ղուկաս կրօնաւորը Կտուցում ընդօրինակում է Աղօթամատոյց (ՄՄ 6989): Գրիչը, ինչպէս հարկն է, կարեւորել է գաղափար օրինակի լաւ ընտրութիւնը. «Աղօթամատուց ի լաւ եւ յընտիր աւրինակէ, այլ եւ սակաւ ինչ ժողովեալ աստի եւ անտի եդաք ընդ սմա, որ է Նարեկացի եւ Աւետարան եւ սակաւ ինչ քարոզ եւ քերական, եւ ժամակարգութեան խրատք եւ այլ սոյնպիսիք, եւ եդաք ի մի տուք»[17]:

1655 թ. Դաւիթ գրիչը ընդօրինակում է Աստուածաշունչ (Եղմ. 2601):

1654 թ. եւ 1675 թթ. Կտուց է այցելում Յովհաննէս Շոռոթեցին: Յովհաննէս վարդապետ Շոռոթեցին Նախիջեւանի Երնջակ գաւառի Շոռոթ գիւղաքաղաքից, Վարդան քահանայի որդին, Հայոց Փիլիպպոս կաթողիկոսի հրամանով 1652 թ. գնում է Երուսաղէմ: Այստեղ նա ժողովրդին ուսուցանելու եւ խրատելու համար կարիք է ունենում մի լաւ եւ ընտիր քարոզգրքի: Ուստի ետ է վերադառնում Հայաստան եւ սկսում շրջագայել տարբեր վայրերում՝ քարոզներ ընդօրինակելու համար: Ձեռագրի ընդօրինակումը (ՄՄ 2111) սկսում է իր հայրենի երկիր Շոռոթի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ վանքում, ապա այնտեղից գնում Կտուց անապատը, ուր պահուող մի հնագոյն Քա-

15 Ձեռագիրը չի պահպանուել, յիշատակարանը տե՛ս ՄՄ, ձեռ. թիւ 6273 (Ղեւոնդ Փիրղալեմեան, *Նշխարք պատմութեան հայոց*, հտ. Ա, գրուած 1868-69 թթ.). *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, ԺԵ դար, հտ. Գ, էջ 101:

16 Ս. Մուրատեան, Ն. Մարտիրոսեան, *Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից*, Երուսաղէմ, 1967, ձեռ. թիւ 70, էջ 63-66:

17 *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, ԺԷ դար, կազմ. Վ. Յակոբեան, հտ. Գ, Երեւան, 1984, էջ 218:

րոզգրքից ընդօրինակում է ճառեր: Նրան աշխատակցում է Առաքել քահանայ Վանեցին: Կտուց անապատից յետոյ գրիչը շարունակել է իր աշխատանքը նաեւ այլ վայրերում:

1661 թ. Սարգիս գրիչն ընդօրինակում է Ներսէս Լամբրոնացու «Առակաց Մեկնութիւն»-ը. ձեռագրի ստացողը վանքի առաջնորդ Մարտիրոսն է (ՄՄ 4994): Կտուցի միաբան Ղազար աբղ. Արղնեցուց մեզ յայտնի է երկու ձեռագիր. առաջինը Գր. Նարեկացու Աղօթագիրքն է (ՄՄ 4989, 1681 թ.), երկրորդը Ժողովածոյ է (ՄՄ 5624, 1683 թ.), որը բովանդակում է տարբեր հայրերի գրած աղօթքներ, Հաւատքի դաւանութիւն, տաղեր, դեղագրեր եւ այլ մանր նիւթեր:

Հայրապետ դպիր Մահմուտանցուց մեզ հասել է չորս ձեռագիր՝ առաջինը Սաղմոսաց մեկնութիւն է՝ ընդօրինակուած 1691/2 թ. (ՄՄ 4694), երկրորդը՝ Ժողովածոյ (ՄՄ 5087), երրորդը՝ Աստուածաշունչ (ՄՄ 6753 թ.), որը գրիչը մասամբ գրել է Լիմում: 1687 թ. գրիչն ընդօրինակում է Ժողովածոյ (Եղմ. 2332) Նիկողայոս վարդապետի խնդրանքով. «Քրիստոս Աստուած ողորմեա ստացողի գրոցս՝ Նիկողայոս վարդապետին եւ ծնողաց նորին. ամէն: Գրեցաւ ձեռամբ Հայրապետի, ի դուռն Կտցու Սբ. Անապատի, ՌՃԼԶ թուականին. ամէն»: Այս ձեռագիրը յետագայում փոխադրուել է Լիմ անապատ: Հայրապետ գրիչը նաեւ կազմարար է: 1687 թ. Կտուցում Հայրապետ երէցը կազմում է մի Աւետարան՝ ոմն Թումա քահանայի խնդրանքով (ՄՄ 4666): Հայրապետ գրչի կազմած ձեռագրերից է ԺԷ. դ. Աղթամարում գրուած Աւետարանը (ՄՄ 5519), որը նա վերակազմել է 1701 թ.:

1686 թ. Փիլիպպոսը եւ Գէորգ Բիւզանդացին ստացողներն են Կտուցում ընդօրինակուած Ժողովածոյի (ՄՄ 8391): Ձեռագրի գրիչներն են Կարապետը, Յակոբ երէցը, Գրիգորիկը: Ձեռագիրը պարունակում է դաւանաբանական նիւթեր, մեկնութիւններ, աղօթքներ: Թէեւ ձեռագրում գրչութեան որեւէ թուական նշուած չէ, սակայն ստացողների թուականից՝ 1686-ից, կարելի է դատել, որ այն գրուել է այս թուականից փոքր-ինչ շուտ:

ԺԷ. դարավերջին է գործել Մարտիրոս Համթեցի գրիչը: Նրա ընդօրինակութեամբ մեզ է հասել 3 ձեռագիր: Առաջինը Քարոզգիրք է եւ գրուել է 1696 թ. (ՄՄ 1844)[18]:

1696-1708 թթ. Մարտիրոս Համթեցին գրում է Ժողովածոյ (ՄՄ 2191): Ձեռագիրը սկսում է գրել Կտուց անապատում, ապա շարունակում Ամիրդոլու վանքում, Երուսաղէմում (Բարձրահայեաց Սբ. Աստուածածին) եւ Ախթայ վանքում[19]: Վերջին յիշատակարանում (1707 թ.), գրիչը նշում է նաեւ ձեռագրի ստացողին՝ «/192բ/ի վայելումն յԵրուսաղեմայի Սիմէօն վարդապետի»: 1697 թ. Մարտիրոս գրիչը ընդօրինակում է եւս մէկ Ժողովածոյ (Վնտ. 22, հմր. 1238):

Անթուակիր է ԺԷ. դ. Վարդան դպիրի ընդօրինակած աղօթագիրքը (ՄՄ 3471):

1711 թ. Յակոբ Բաղիշեցին ընդօրինակում է Հայելի վարուց (ՄՄ 4706), 1726 թ. Գրիգորը՝ Գր. Տաթեւացու Քարոզգիրքը (ՄՄ 8053), 1733 թ. Կարապետ Բաղիշեցին՝ Գր. Տաթեւացու «Ցաղագս Գաւազան տալոյ» երկը (ՄՄ 5721): 1741 թ. Կտուցում ընդօրինակւում է Աղօթագիրք. սրա առաջին ստացողը Մահտեսի Գրիգորն է, երկրորդը՝ Մելքոն վարդապետը (1802 թ.): 1753 թ. վանքում ընդօրինակւում է Քարոզգիրք (Վիեն. 1527):

18 Ձեռագիրը մէկ կազմի մէջ է ԺԸ. դ. Ամիրդոլու վանքում Յակոբ Բաղիշեցու ձեռքով գրուած ձեռագրի հետ:

19 Ձեռագիրը մէկ կազմի մէջ է 1687 թ. Մառտին քաղաքի Սբ. Յովհաննէս վանքում Իգնատիոս սարկաւագի ձեռքով գրուած ժողովածոյի հետ:

Սակաւաթիւ են նաեւ ԺԹ. դարում ընդօրինակուած ձեռագրերը: 1801 թ. եւ 1826 թ. Յովհաննէս Պոլսեցին ընդօրինակում է Պետրոս Բերթումեանի Քարոզգիրքը (ՄՄ 6576), 1853 թ. Յարութիւն Թիֆլիսցին՝ Ժողովածոյ (ՄՄ 5357): 1848/9 թթ. մխիթարեան հայրերից Ներսէս վրդ. Սարգիսեանը, այցելելով Լիմ եւ Կտուց անապատները, ընդօրինակում է Սարգիս Կունդի Աւետարանական մեկնութիւնները՝ «Մեկնութիւն Ղուկասու եւ Յովհաննու» (Վնտ. 687 /հմր. 1350), Յովհան Ոսկեբերանի երկերը (Վնտ. 687 /հմր. 1350) եւ Եկեղեցու հայրերի գրուածքներից այլ ընտիր երկեր՝ «Հաւաքումն բանից նախնեաց» խորագրով (Վնտ. 678 /հմր. 305)[20]:

Կտուցի Սբ. Կարապետ վանքը, ինչպէս նաեւ Վանայ լճի միւս կղզիների՝ Աղթամարի եւ Լիմի վանքերը, եղել են թէ՛ ձեռագրաստեղծման, թէ՛ ձեռագրապահպանման խոշոր կենտրոններ: Անշուշտ, Կտուցում, ինչպէս նաեւ հայկական գրչութեան այլ կենտրոններում ստեղծուել են աւելի մեծ քանակով ձեռագրեր. սրանց մի մասը կորել, ոչնչացուել են տարաբնոյթ աղէտների ու պատերազմների հետեւանքով: Զգալի թիւ են կազմում 1915 թ. եղեռնալից օրերին կորած ձեռագրերը: Թէեւ Կտուցից մեզ հասած ձեռագրական ժառանգութիւնն աւելի քիչ է, քան Աղթամարինը եւ Լիմինը, այնուամենայնիւ, այդ ձեռագրերը մեր մշակութային անգին եւ անգնահատելի գանձերն են:

20 *Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Է, կազմ. Ս. Ճեմճեմեան, 1996 թ., ձեռ. թիւ 687, հմր. 1350, էջ 667-674 (թերթ՝ 346, թուղթ, 23x36, միապիւն, շղագիր):

ԳԻՐՔԸ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԿԵԱՆՔՈՒՄ

Սուսաննա Յովհաննիսեան

Թումանեանը հայ ամենաընթերցասէր գրողներից է, գրքի, գրականութեան եւ հրապարակագրութեան վրայ մեծ ազդեցութիւն թողած հեղինակ: Եթէ Մ. Լերմոնտովը չաւարտեց Մոսկուայի համալսարանը, Լ. Տոլստոյը՝ Կազանինը, ապա Թումանեանը չաւարտեց նոյնիսկ Ներսիսեան դպրոցը: Ուսումնառութիւնը կիսատ թողած բանաստեղծը հէնց գրքի շնորհիւ, գիտական ու գեղարուեստական ընթերցանութեամբ ընդլայնեց իր մտահորիզոնը, դարձաւ Բրիւսովի խօսքերով՝ «ինքնակիրթ» եւ մեր ազգային մշակոյթի պատմութեան մէջ մտաւ իբրեւ հրապարակախօս, քննադատ, գիտնական ու, թէեւ անաւարտ, սակայն պատմաբանասիրական ուսումնասիրութիւնների, քաղաքակրթութեան ու մշակութաբանութեան, հայ գրականութեան եւ ազգային պատմութեան համար արժէքաւոր ծրագրային հիմնարար յօդուածների հեղինակ: Գրողի աշխատութիւնները, նոյնիսկ բանաւոր զրոյցներն ու նամակները վկայում են բազմակողմանի զարգացած մարդու լայն մտահորիզոնի մասին:

Գրքի նկատմամբ Թումանեանի սէրը վիթխարի էր. ապացոյցն իր կեանքի օրօք 10 000 միաւոր գրականութիւն կազմող գրադարանն էր: Այսօր պահպանուել եւ գրողի թանգարանում պահւում է շուրջ 8000 գիրք: Անհետ կորած մօտ 2000 գրքերի զգալի մասը ժամանակին բռնագրաւուել է ոստիկանների կողմից նրան ձերբակալելիս, մի մասը ինքն է նուիրել եւ չի կարողացել նոր օրինակ գտնել, մի որոշ մասն էլ չի պահպանուել տարբեր պատճառներով: Երբ Թումանեանը դուրս եկաւ հայրական տնից, իր հետ քաղաք էր բերել մէկ գիրք՝ Խաչ. Աբովեանի «Վէրք Հայաստանին» եւ «Հիւսիսափայլ» ամսագրի մէկ համար: Գրողն ինքը խոստովանում է. «18 տարեկան էի դարձել եւ միայն մի քանի գիրք էր անցել ձեռքս, էն էլ մեծ մասամբ պատահմունքով»[1]: Եւ ընդամէնը երեք տասնամեակում, ազգային-հասարակական հոգսերով գերծանրաբեռնուած կեանքի ընթացքում նա ձեռք բերեց մեծ ու արժէքաւոր գրադարան: Համեմատութեան համար ասենք, որ Լ. Տոլստոյի Եասնայա Պոլեանայում պահւում է շուրջ 16.000 գիրք, որ ձեռք է բերել ապահովուած Տոլստոյների ազնուական տոհմի մի քանի սերունդ, իսկ Թումանեանը միայնակ կազմեց իր գրադարանը: Այն սիրով, յատուկ խնամքով եւ ընտրութեամբ ձեռք բերուած կովկասագիտական, հայագիտական, արուեստաբանական, պատմագիտական, փիլիսոփայական եւ այլ բնագաւառների գրքերի հարուստ հաւաքածոյ՝ է տարբեր լեզուներով:

Բանաստեղծի գրադարանը արժէքաւոր է մի շարք առումներով: Գրքերի ընտրութիւնը վկայում է ընթերցող Թումանեանի ճաշակի, նախասիրութիւնների, հետաքրքրութիւնների լայն շրջանակի մասին: Այստեղ կարելի է հանդիպել հին աշխարհին, մարդու ծագումնաբանութեանը, աստուածաշնչեան մարգարէութիւնների պատմութեանը, Յովհաննու Յայտնութեանը վերաբերող ուսումնասիրութիւնների[2], աշխար-

1 Յովհաննէս Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով*,- ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., (Թումանեան, ԵԼԺ) հտ. 7, Երեւան,1995, էջ 226: Այսուհետեւ՝ ԵԼԺ, հատորն ու էջը կը նշուեն տեքստում:

2 Տե՛ս Г. Мортилье, А. Мортилье, *Донсторическая жизнь: Происхождение и древность человека*, пер. с французского, СПб., 1903, 575